

որպէսզի իր պարտքը վճարեն Թուրքերուն։ Զանոնք առ այդ մղեց, եւ մասամբ դոհացում ստացաւ։ Անոնք մեծամեծ դումարներ վճարեցին փորձանքէ աղատելու համար իրենց Պատրիարքը, զոր շատ աւելի նուազ պարտապան կը կարծէին քան ինչ որ էր իրօք. բայց տեսնելով որ որչափ ալ վճարէին, միշտ աւելի մեծ պարտքեր երեւան կ'ելլէին, այլեւս չուզեցին վճարել, ինչ հնարք եւ ինչ բռնութիւն ալ բանեցուէին իրենց դէմ։

«Յակոբ (Կաթողիկոս) իր Թուրք պարտատէրերուն հասկցուց՝ թէ հարկ էր իրեն հետ մարդիկ դրկել Հայաստան, եւ թէ հոն պիտի վճարէր իր պարտքերը։ Այս խօսքին վրայ, թոյլ տուին որ մեկնի։ Երբ իր տեղը հասաւ, Պարսիկներն ու Հայերը հաւաքաբարպէս զայրացած դտաւ իր ծախսերուն եւ խօշական (1) ձեռնարկին համար։ Ոչ ոք ուզեց իրեն դրամ տալ, եւ երբեք չհանդուրժեցին որ Պատրիարքական Գանձին դաշի, այնպէս որ Կ. Պոլսոյ մաքսական երկու պաշտօնեաներ, որոնք իրեն ընկերացած էին պանծելու նպատակաւ վճարումը 80.000 տուրքներու, զորս կը պարտէր իրենց տիրոջ, ստիպուեցան ձեռնունայն վերադառնալ, հատուցումի բոլորովին անկարող գտնելով Պատրիարքը։

«Մաքսապետը տեսնելով որ իր պարտ-

---

(1) Շարտէն չափազանց խիստ է իր դատումին մէջ, որովհետեւ վերահասու չէ խնդրին։